11042

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 07 » 09 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0161-21

Ձեռնարկողը՝ *«Հայկ Գրուպ» ՍՊԸ*
Արագածոտնի մարզ, գ. Մաստարա 4-րդ փ. փ. 22

Գործունեությունը՝ *Հացաշենի փուֆերի հանքավայրի (1-A, 2-B և 3-C1 բլոկներ) բացիանքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0161-21

< 07 > 09 2021թ.

Արագածոտնի մարզի Հացաշենի տուֆերի հանքավայրի (1-A, 2-B և 3-C1 բլոկներ) բացահանքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայկ Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Մաստարա համայնք

Ներածական մաս. Հացաշենի տուֆերի հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզի Մաստարա համայնքի վարչական տարածքում, Հացաշեն բնակավայրից 5,0կմ դեպի հարավ-արևելք:

Հացաշենի 1-A, 2-B, 3-C1 բլոկների տեղամասը զբաղեցնում է 1.862 հա մակերեսով տարածք, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, իսկ գործառնականը՝ արոտավայր (1.5հա) և վարելահող (0.362հա):

Մոտակա բնակավայրերն են՝ Հացաշեն, Մաստարա, Զարինջա գյուղերը և Թալին քաղաքը(8.5 կմ դեպի հարավ-արևելք): Հանքավայրի նշված տեղամասը տեղակայված է ծովի մակերևույթից 1620-1650մ բարձրությունների վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրում օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները ՀՀ պաշարների պետական հանձնաողովի կողմից հաստատվել են A+B+C1 կարգով՝ 3944.7 հազ.մ^3 քանակությամբ(արձանագրություն թիվ 343; 13. 12.1991թ), որից՝ մակաբացման ապարների ծավալը կազմում է 27940մ^3:

Նախատեսվող բացահանքի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 265700մ^3 տարեկան տուֆի զանգվածի հանույթով (13285մ^{3}տուֆի մարվող պաշար), արդյունահանվող պաշարներինը՝ 234400մ^3: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ընդունված է ըստ տուֆի զանգվածի՝ 11720 մ^3(արդյունահանվող պաշար): Ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հանքավայրի նկարագրվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատները(WGS -84 համակարգով)՝

1. 8399121.3 4477314.5
2. 8399053.6 4477391.1
3. 8399179.0 4477425.4
4. 8399297.0 4477401.1
5. 8399242.9 4477312.8

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է իրագործել բաց լեռնային եղանակով(բացահանքի միջոցով)՝ առանց հորատապայթեցման աշխատանքների: Արդյունահանումը կիրականացվի CMP-026 քարհատ մեքենաների օգտագործմամբ՝ 0.42մ բարձրությամբ աստիճաններով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարությունը – 245մ,
- առավելագույն լայնությունը -112մ,
- առավելագույն խորությունը - 14.27մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը - 1.5մ,
- արտադրական թափոնների ծավալը - 138776մ^3,

- մակաբացման ապարները և արտադրական թափոնները սկզբնական շրջանում կպահեստավորվեն բացահանքի արևելյան մասում ձևավորվող ժամանակավոր N1(տուֆերի բեկորներ պարունակող ավազախճային նստվածքներով հողաբուսական շերտ), N2(ավազաքարեր, տուֆերի բեկորներ պարունակող ավազակավային, ավազախճային նստվածքներ, փուշտա) և N3(արտադրական թափոններ) լցակույտերում, հետագայում բացված՝ արդյունահանված հորիզոնների վրա ներքին լցակույտ կատարելու համար – 166716մ^3 ընդհանուր ծավալով:

Լցակույտաառաջացման ժամանակ մակաբացման ապարները և արտադրական թափոնները ավտոինքնաթափով կտեղափոխվեն դեպի արտաքին ժամանակավոր լցակույտը և բուլդոզերով կփռվեն թեքության վրա:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ(նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երեք խմբերի.

ա/ հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններով պայմանավորված կորուստներ՝ կախված օգտակար հաստվածքի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից բնամասերի տեսքով թողնվում են բացահանքի կողերում(17925մ^3 կամ հանածոյի քանակի 6.75 %-) և հատակին(11465մ^3 կամ հանածոյի քանակի 4.32%)՝ հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար,

բ/ շահագործման կորուստներ - առաջանում են օգտակար հաստվածքի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ, կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայով և ընդունվում են՝ 1370մ^3(0.5 %),

գ/ բացող խրամի տակ մնացող կորուստներ - 540մ^3(0.2 %):

Օգտակար հանածոն ավտոինքնաթափերով տեղափոխման ժամանակ կորուստները չնչին են, և դրանք չեն հաշվառվել: Բացահանքի կորուստները կկազմեն ընդամենը՝ (265700-234400), 265700 x 100=11.78%:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, մանր ցածրաստիճանային մշակման համակարգով: Մշակման համակարգի տարրերը հաշվարկված են արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիական սխեմայի համաձայն:

Աշխատանքային ճակատի 100մ միջին երկարության, աստիճանի 0.42մ բարձության և ռելսերի 2.65մ առաջխաղացման մեկ քայլի դեպքում արդյունահանվող տուֆի զանգվածի ծավալը կազմում է 100x0.42x2.65=111.3մ^3: Ուստի տարվա ընթացքում կատարվող ռելսագծերի անհրաժեշտ տեղափոխումների քանակը կստացվի՝ 11720:111.3=105.3 տեղափոխում: Ռելսերի տեղափոխումը կատարվում է AMKODOR 33C4 անիվային բարձիչի օգնությամբ:

Արդյունահանման ժամանակ ստացված ուղիղ կտրված քարերի բարձումը սպառողի տրանսպորտային միջոցներին կատարվում է ձեռքով:

Բանվորների արտադրողականությունը քարի բարձման ժամանակ ըստ ՆՏՆ-ի ընդունվում է 15 մ^3/հերթ:

Շահագործման 18-րդ տարվանից սկսած 138776մ^3 արտադրական թափոնների և 19740մ^3 փուշտայի(խճաքարերով՝ ավազակավերի հետ խառը) ծավալը լցակույտերից կտեղափոխվեն բացահանքի բացված՝ 1603.7մ, 1601.6մ և 1599.5մ բարձրության հորիզոնների վրա և 8.5մ միջին բարձրությամբ կփռվեն, ապա՝ կկատարվի հարթեցում, այսինքն շահագործմանը զուգընթաց կատարվում է ներքին լցակուտաառաջացում: Սկզբում արտադրական թափոններն ու փուշտան կլցվեն արդեն շահագործված տարածք, իսկ նրանց վրա՝ խճաքարերով ավազակավերը:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը կբերվի ջրցան-լվացող КО-002 մակնիշով ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կկազմակերպվի ШН-БЦБ-1.4 ջրի ցիստեռնի միջոցով:

Հանքավայրի տուֆերն իրենց որակով պետք է ապահովեն «Պատքարեր՝ լեռնային ապարներից» ГОСТ 4001-84 չափորոշիչի պահանջներին համապատասխանող պատքարի ստացումը, պատքարի արդյունահանման թափոնները պետք է ապահովեն թեթև բետոնների լցանյութերի ստացումը, որոնք կհամապատասխանեն «Խիճ և ավազ՝ ծակոտկեն ապարներից» ГОСТ 22263-76 չափորոշիչի պահանջներին, տուֆերը ռադիոակտիվ-հիգիենիկ հատկություններով պետք է համապատասխանեն НРБ-76 և ОСТ-76/84 նորմերի ու չափորոշիչի պահանջներին:

Բացահանքի հատակի վրա մինչև շահագործման ավարտը լցակույտերից կտեղափոխվեն ողջ արտադրական թափոններն ու մակաբացման ապարների 19740մ^3 ծավալը՝ լցվելով 8.5մ միջին բարձրությամբ և կատարելով հարթեցում: Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները կիրականացվեն բացահանքի շահագործման ավարտից հետո Մակաբացման ապարների մնացած մասը՝ 8200մ^3 ծավալով, որից 4660մ^3 բուսահողն է, իսկ 3540մ^3 խճաքարեր, ավազակավեր կտեղափոխվի և կլցվի բացահանքի արդեն վերականգնված մակերեսի վրա՝ 0.45մ բարձրությամբ: Հարթեցումը կկատարվի շահագործման ավարտից հետո: Հարթեցումը կատարվում է բուլդոզերի օգնությամբ՝ բացահանքի ողջ մակերեսով, ինչպես նաև արտադրական հրապարակը, ավտոճանապարհները, լցակույտի նախկին մակերեսը: Հարթեցման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 31800մ^2:

Կենսաբանական ռեկուլտիվացում կկատարվի լեռնային աշխատանքների արդյունքում խախտված հողատարածությունների վերականգնված տարածքի վրա՝ շահագործման ավարտից հետո, որի մակերեսը կազմում է 1.468 հա: կենսաբանական ռեկուլտիվացման հաշվարկը իրականացվել է ըստ ոլորտում ընդունված գործակցի՝ 200 000 դրամ՝ մեկ հեկտարի համար.

1.468 հա x 200 000 դր.=293600 դրամ:

Ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն ընդամենը՝ 1494800+293600=1788400 դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

-փոշենստեցման նպատակով փոշեգոյացման օջախների(աշխատանքային հրապարակները, հանքաստիճանները, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտ տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրցանում տարվա չոր և շոգ եղանակներին(օրական 2 անգամ),

- բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերակուլտիվացում,
- շահագործման ավարտից հետո կենսաբանական վերակուլտիվացում,
- վառելիքաքսուքային նյութերով հողածածկույթի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցների սարքին վիճակով շահագործում՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը,
- հողի աղտոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում աղբամանների տեղադրում,

բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում՝ թփուտներով,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա՝ զտիչների տեղադրում՝թունավոր խառնուրդների չեզոքացման նպատակով:
- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:

Պատճառաբանական մաս. Արագածոտնի մարզի Մաստարայի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/

մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայկ Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Հացաշենի տուֆերի հանքավայրի (1-A, 2-B և 3-C1 բլոկներ) բացահանքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան